



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2017



Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ:
Արտահայտված տեսակետները պատկանում են
հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն
ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	3
ՆԱԽԱԲԱՆ	4
ԳԼՈՒԽ 1. Խնամակալության և հոգաբարձության մարմինները և դրանց գործունեության վերաբերյալ գնահատականները.....	10
1.1 Երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի բնութագիրը, էությունը և գործառույթները.....	10
1.2 ԽՀՄ/ԽՀՀ գործունեության գնահատումը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 15	
1.3 ԽՀՄ/ԽՀՀ վերաբերյալ տեղական և միջազգային կազմակերպությունների գնահատականը	18
1.4 Հասարակական կազմակերպությունների և ԽՀՄ/ԽՀՀ աշխատակիցների նկատառումները ԽՀՄ/ԽՀՀ վերաբերյալ.....	20
ԳԼՈՒԽ 2. Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության ոլորտում առկա խնդիրների իրավական վերլուծություն.....	23
2.1 Երեխայի լավագույն շահը և նրա կարծիքը հաշվի առնելու հիմնախնդիրը.....	23
2.2 ԽՀՄ/ԽՀՀ աշխատողների մասնագիտական պատրաստվածությունը, մոտիվացվածությունը.....	28
2.3 ԽՀՄ/ԽՀՀ գործունեության ընթացակարգային բացթողումները.....	37

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԸԿԵԻՊԲ - Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

ԽՀՄ - Խնամակալության և հոգաբարձության մարմին

ԽՀՀ - Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով

ՆԱԽԱԲԱՆ

Երեխաները, լինելով պետության և հասարակության ապագան, զգայուն են և ունեն առավելագույն պաշտպանության կարիք: Հայտնի է, որ հասարակության կյանքում տեղի ունեցող բոլոր ցնցումների ժամանակ (տարերային աղետներ, սոցիալական անբարենպաստ պայմաններ և այլն) առավելապես տուժում են երեխաները: Ուստի, յուրաքանչյուր պետություն պարտավոր է լուրջ քայլեր ձեռնարկել՝ ուղղված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանը:

Երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրն ամրագրում է ստացել միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1959 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին» հռչակագրի, երեխան, պայմանավորված նրա ֆիզիկական և մտավոր անհասունությամբ, հատուկ սոցիալական պաշտպանության և հոգատարության կարիք ունի, ներառյալ իրավական պաշտպանությունը ինչպես ծննդից առաջ, այնպես էլ՝ դրանից հետո: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան ամրագրեց, որ երեխաները, ինչպես չափահաս քաղաքացիները, ունեն միատեսակ քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ:

Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանությունը նույնպես համարվում է առաջնահերթ լուծման ենթակա խնդիր, որի համար քայլեր են ձեռնարկվել: Մեր երկիրը վավերացրել է երեխաների իրավունքներին առնչվող միջազգային համապատասխան փաստաթղթերն ու ձևավորել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի իրավակարգավորումներին ուղղված օրենսդրություն:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով:

1993 թվականին Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիան, պարտավորվեց օրենսդրությունը համապատասխանեցնել Կոնվենցիայի դրույթներին: **Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանը ճանաչեց, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում և որ երեխան պետք է պաշտպանված լինի բռնության բոլոր ձևերից և ունենա Կոնվենցիայում նշված բոլոր իրավունքները:**

Երկրի բարեկեցության ամենակարևոր նախադրյալն երեխաների շահերին նպատակաուղղված պետական քաղաքականությունն է: 1996 թվականին ընդունվեց «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որը նպաստեց երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի ձևավորմանը: Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության իրականացման և համակարգման առումով կարևորագույն ձեռքբերումներից է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի ձևավորումը:

Այնուամենայնիվ, չնայած նշված համակարգի ստեղծմանը՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում դեռևս կան խնդիրներ, որոնց մասին նշվել է մի շարք տեղական և միջազգային կառույցների, այդ թվում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Երեխաներն իրենց տարիքային, մտավոր և ֆիզիկական զարգացվածության մակարդակի ուժով համարվում են խոցելի հատուկ խումբ և ունեն մշտական հոգատարության և պաշտպանության կարիք:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում նշել է, որ մտահոգության տեղիք տվող խնդիրներից է նախևառաջ օրենսդրությունը: Ըստ դիտարկումների՝ Կոմիտեին մտահոգում է նաև երեխաների իրավունքների ոլորտում արդեն իսկ գործող իրավակարգավորումների անբավարար իրացումը: Հաշվի առնելով երեխայի իրավունքների պաշտպանության և խթանման գործում մարդու իրավունքների անկախ կառույցների դերի մասին իր թիվ 2 ընդհանուր մեկնաբանությունը՝ Կոմիտեն խորհուրդ է տվել նաև քայլեր ձեռնարկել ՀՀ

մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում երեխաների իրավունքների պաշտպանության բաժին ստեղծելու ուղղությամբ¹:

«Վարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն ասոցացման հիմքով անդամակցում է նաև Երեխաների օմբուդսմանների Եվրոպական ցանցին: Ցանցը միավորում է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների մարդու իրավունքների ազգային հաստատությունները և նպատակ ունի խթանել երեխաների իրավունքների պաշտպանությունը՝ հիմք ընդունելով «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան: Ցանցը երեխաների օմբուդսմանների ամենահեղինակավոր կառույցն է Եվրոպայում, որն իրականացնում է տարբեր երկրների փորձի փոխանակում և տրամադրում է խորհրդատվություն երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտներում:

Նշված ցանցին լիիրավ անդամակցության համար երկրում պետք է լինի Երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հատուկ կառույց կամ մարդու իրավունքների գոյություն ունեցող միասնական ազգային կառույցում պետք է գործի երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող առանձին ստորաբաժանում²: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2016թ. հունիսին 15-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին:

2016թ. դեկտեմբերին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի³ ընդունումն էլ ավելի հիմնավոր դարձրեց Երեխաների իրավունքների բաժնի ստեղծումը: Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում,

¹ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> (16,17 կետեր)

² <http://enoc.eu/wp-content/uploads/2015/01/ENOC-Statutes-ENG.pdf> (հոդված 4)

³ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի դերն առավել արժևորվեց՝ մի կողմից բարձրացնելով այդ մարմնի նշանակությունը երկրի իրավական համակարգի կատարելագործման հարցում, մյուս կողմից հոշակելով յուրաքանչյուր անձի բացարձակ իրավունքը ստանալու Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը: ՀՀ Սահմանադրության «Մարդու իրավունքների պաշտպանը» վերտառությամբ 10-րդ գլխով ամրագրելով Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները և լիազորությունները, ընտրության կարգը և գործունեության երաշխիքները՝ այն հաստատվում է որպես մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտ:

ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանություն և վերջիններիս խախտումների կանխարգելում: Նույն Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է իրականացնել պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ, հանդես գալ երեխայի իրավունքներին առնչվող հատուկ հրապարակային զեկույցներով և իրավասու մարմիններ ներկայացնել երեխաների իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում կնպաստի երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի խնդիրների լուծմանը, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում գործում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ, որը ներդրվել է դեռևս 2005 թվականին: Այն բաղկացած է Ազգային հանձնաժողովից (ազգային մակարդակ), մարզպետարաններում գործող Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության մարզային բաժիններից (մարզային մակարդակ) և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ Խնամակալության և հոգաբարձության մարմիններից (համայնքի ղեկավար), որոնց կից գործում են համապատասխան հանձնաժողովները:

Բացի այդ, 2010 թվականից Հայաստանում սկսվել է սոցիալական ծառայությունների բարեփոխման գործընթացը, 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 952-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը նշանակում է նոր որակի ծառայությունների տրամադրում, անձի սոցիալական վիճակի վրա ներազդելու սկզբունքորեն նոր մեթոդների ու մեխանիզմների կիրառում: Ցավոք, դեռևս այնքան էլ հստակ չեն ինտեգրված սոցիալական ծառայությունների և, մասնավորապես, դեպք

վարողների լիազորություններն ու պարտականությունները դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին առնչվող դեպքերի վարման գործառույթի առնչությամբ:

Հանդիսանալով համայնքային մակարդակում երեխաների պաշտպանության առաջնային օղակ՝ ԽՀՄ/ԽՀՀ-ների գործունեությունը կարևոր է և պետք է իրականացվի պատշաճ ու արհեստավարժ հենքով: Ուստի, սույն զեկույցի հիմնական **նպատակն** է պարզել ԽՀՄ/ԽՀՀ-ների գործունեության ընթացքում ներկայում առաջացող խնդիրները, ոլորտը կարգավորող իրավական ակտերում առկա բացերը, անհարկի կրկնություններն ու հակասությունները և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Սույն զեկույցում ԽՀՄ/ԽՀՀ-ների գործունեության վերլուծությունն իրականացվել է հետևյալ **սկզբունքներով**.

- Վերլուծվել են ԽՀՄ/ԽՀՀ-ների վերաբերյալ տեղական և միջազգային կազմակերպությունների հաշվետվություններն ու զեկույցները: Դրա հիման վրա առանձնացվել են ոլորտի հիմնախնդիրները: Վերլուծության են ենթարկվել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի, Սեյվ դը չիլդրեն (Save The Children), Չայլդ պակտ (Child Pact), Վորլդ Վիժն (World Vision) և այլ կազմակերպությունների զեկույցներ:
- Իրականացվել է համայնքային մակարդակում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի վերաբերյալ այլ երկրներում գործող իրավական կարգավորումների **ուսումնասիրություն**: Մասնավորապես, ուսումնասիրվել են ԱՄՆ, Գերմանիայի, Ֆինլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի, Խորվաթիայի, Լատվիայի, Էստոնիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Ղազախստանի և այլ երկրների օրենսդրական փորձը: Իրականացվել է Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանցի (ENOC) անդամ երկրների օմբուդսմանների փորձի **վերլուծություն**:
- Վերլուծվել է ԽՀՄ/ԽՀՀ-ների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը՝ դրանց գործառնականության, ներքին տրամաբանության և ոլորտի հիմնախնդիրներին համապատասխանելու աստիճանի տեսանկյունից: Մասնավորապես, մանրակրկիտ

ուսումնասիրվել են ԽՀՄ-ների կանոնադրությունը և ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը, ԽՀՄ-ներին կից գործող ԽՀՀ-ների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը, Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը⁴ և այլն:

- Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի հասարակական կազմակերպությունների և ԽՀՀ-ների ներկայացուցիչների հետ կազմակերպվել են **Ֆոկուս-խմբեր՝** ԽՀՄ/ԽՀՀ-ների գործունեությանն առնչվող խնդիրների վերհանման նպատակով:
- Իրականացվել է նշված աղբյուրներից հավաքագրված վերլուծական տեղեկությունների **համադրում՝** ԽՀՄ/ԽՀՀ գործունեության առկա խնդիրների ընկալման, ինչպես նաև դրանք շտկելու գործնական առաջարկների մշակման նպատակով՝ հաշվի առնելով միջազգային փորձը:

⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=51983>

ԳԼՈՒԽ 1. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

1.1 Երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի բնութագիրը, էությունը և գործառույթները

Հայաստանում երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգը ներդրվել է 2005 թվականի՝ ազգային մակարդակում ընդգրկելով Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը, մարզային մակարդակում՝ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները (ԸԿԵԻՊԲ) և համայնքային մակարդակում՝ ԽՀՄ/ԽՀՀ-ները:

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ-835-Ն որոշմամբ: Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է: Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանն աջակցելը.
- 2) Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշակման ապահովմանն աջակցելը.
- 3) Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելը.
- 4) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանն աջակցելը.

5) երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային և մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանն աջակցելը:

Այնուհետև, ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ-1295-Ն որոշմամբ հաստատվել է հանձնաժողովի նոր կանոնադրությունը և անհատական կազմը:

Չնայած կարևոր դերին, հանձնաժողովի գործունեությունը բավարար արդյունավետ չի եղել՝ երեխաների իրավունքներին վերաբերող խնդիրները համակարգելու, նոր լուծումներ առաջարկելու տեսանկյունից: Այսպիսի մտահոգություն է հայտնել, օրինակ, ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն Հայաստանի զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում⁵: Կոմիտեն նաև առաջարկել է բավարար մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով ապահովել հանձնաժողովին՝ ազգային, տարածքային և համայնքային մակարդակներում երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված համագործակցությունը բարելավելու համար: Հանձնաժողովի գործունեության արդյունավետության մասին մտահոգություններ առկա են նաև տեղական և միջազգային կազմակերպությունների զեկույցներում⁶:

ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ-1833-Ն որոշմամբ ՀՀ մարզպետարանների կառուցվածքում կատարվեցին փոփոխություններ և ավելացվեցին նոր՝ երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի համատեղ հրամանով⁷ 2005 թվականի նոյեմբերի 17-ին հաստատվեց նորաբաց բաժնի կանոնադրությունը: Բաժինները ստեղծվեցին Երևանում և մարզերում՝ երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացման

⁵ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

⁶ <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>

⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21871>

նպատակով: Հետագա տարիներին բաժինների կանոնադրությունը մի քանի անգամ խմբագրվեց, անվանումը դարձավ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ և համապատասխանաբար ավելացան նաև մի շարք գործառույթներ: Այս բաժինները երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի միակ օղակն է, որի աշխատակիցները վարձատրվում են մասնագիտական աշխատանք կատարելու համար: Այս բաժինների գործունեության արդյունավետությունն էլ է մտահոգությունների առարկա տեղական և միջազգային կազմակերպությունների զեկույցներում: Մասնավորապես նշվում է, որ 5-6 մասնագետներով հնարավոր չէ արդյունավետ իրականացնել իրենց վերապահված բոլոր գործառույթները⁸:

Եռաստիճան համակարգի հաջորդ օղակը ԽՀՄ-ներն են: **Խնամակալության և հոգաբարձության մարմինները** սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքով, իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված լիազորություններ ու կրում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականություններ: ԽՀՄ-ները ղեկավարում են համայնքների ղեկավարները (Երևանում ԽՀՄ-ին վերապահված լիազորությունները քաղաքապետի անունից իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները):

ԽՀՄ-ները ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, Ընտանեկան օրենսգրքով, «Երեխայի իրավունքների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին» օրենքներով, միջազգային պայմանագրերով, ինչպես նաև Հոգաբարձության խնամակալության մարմինների կանոնադրությամբ:

ԽՀՄ-ներն իրենց իրավասությունների շրջանակներում, ըստ անհրաժեշտության, համագործակցում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության

⁸ <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>

կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի Թիվ 582-Ն որոշմամբ սահմանված՝ իրենց սպասարկման տարածքների սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հաստատությունների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմինների, հասարակական կազմակերպությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության մյուս կողմերի հետ:

ԽՀՄ-ները երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի ու փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկատվություն ստանում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: ԽՀՄ-ներն անհրաժեշտ խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկություններ կարող են ստանալ նաև մարզպետարաններից, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող անհատ փորձագետներից և այդ ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններից ու հիմնադրամներից:

ԽՀՄ-ների խնդիրներն են՝

- 1) անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.
- 2) երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը.
- 3) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նրանց հրատապ օգնության, անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը.

4) Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ խնդիրներ:

ԻսՀՄ-ին կից ստեղծվում է **խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով (ԻսՀՀ)**, որը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում է նաև հանձնաժողովի նախագահը, ով իր հերթին, հանձնաժողովի կազմից նշանակում է հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար:

Հանձնաժողովը կարող է ունենալ աշխատակարգ, որը հաստատվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ): Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել այն անձինք, որոնց վերաբերում է քննարկումը, նրանց օրինական ներկայացուցիչները և (կամ) լիազորված անձինք: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանձնաժողովի նիստերին որպես դիտորդ կարող են ներկա գտնվել նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ այն անձի (անձանց) համաձայնության դեպքում, որին (որոնց) վերաբերում է տվյալ քննարկումը:

Խնամակալության և հոգաբարձության մարմնի առաջարկով, հանձնաժողովը կազմում ու խնամակալության և հոգաբարձության մարմնին է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրակացություն, որն արտացոլում է քննարկվող

հարցի վերաբերյալ հանձնաժողովի դիրքորոշումը և ունի բացառապես խորհրդատվական բնույթ:

Այսպիսով, ԽՀՄ-ներն ու նրանց կից հանձնաժողովները ՀՀ-ում միակն են, որոնք համայնքներում իրականացնում են անմիջական աշխատանք ընտանիքների, մասնավորապես՝ երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանության ուղղությամբ:

1.2 ԽՀՄ/ԽՀՀ գործունեության գնահատումը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից

ԽՀՄ/ԽՀՀ գործունեության ոլորտը Մարդու իրավունքների պաշտպանի կարևորագույն ուղղություններից է, իսկ վերհանված խնդիրները վերլուծվել են Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում: Գործունեության այս ուղղությունը հատկապես զարգացվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ստեղծմամբ: Այդ բաժինը քննարկում է նաև անհատական բողոքներ:

ԽՀՄ/ԽՀՀ գործունեության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում⁹, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների¹⁰ հիման վրա կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները.

Խնդիր 1. ԽՀՄ/ԽՀՀ աշխատակազմի ցածր մոտիվացվածություն

Ուսումնասիրությունները վկայում են, որ ԽՀՄ/ԽՀՀ մասնագետների ոչ բավարար մոտիվացվածության պատճառ է ԽՀՄ/ԽՀՀ գործունեության իրականացումը կամավորության սկզբունքով: Սա էականորեն խոչընդոտում է այդ կառույցների

⁹ http://www.ombuds.am/publications/annual_reports.html

¹⁰ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին առնչվող 2016 թվականի դիմում-բողոքների ճնշող մեծամասնությունը կապված է եղել ԽՀՀ-ների գործունեության հետ:

արհեստավարժ և մոտիվացված գործունեությունը: Խնդրին նպաստում է նաև այն, որ այդ կառույցների անդամները, զբաղված լինելով իրենց հիմնական աշխատանքային գործունեությամբ, լիարժեք ներգրավվածություն չունեն ԽՀՄ/ԽՀՀ գործառույթների իրականացմանը, իսկ երբեմն էլ ընկալում են այն՝ որպես ավելորդ ծանրաբեռնվածություն:

Խնդիր 2. ԽՀՄ/ԽՀՀ գործունեության թերությունների վերհանման և դրա համար պատասխանատվության ենթարկելու մեխանիզմի հստակեցում

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումները վկայում են, որ ԽՀՄ/ԽՀՀ-ները թերանում են իրենց գործառույթների պատշաճ իրականացման հարցում: Մասնավորապես, ԽՀՄ/ԽՀՀ-ները պատշաճ կերպով չեն գնահատում երեխայի և նրա ընտանիքի կարիքները: Սա իր հերթին հաճախ հանգեցնում է նրան, որ եզրակացությունները գրվում են ընդամենը մեկ տնային այցելությունից հետո: Դրանից բացի, տնայցերի ժամանակ (երբ դրա կարիքը լինում է), որպես կանոն, չեն ընդգրկվում մասնագետներ (օրինակ՝ հոգեբան): Այսպիսի արակտիկան, իր հերթին, հանգեցնում է նրան, որ նշված եզրակացությունները չունեն օբյեկտիվություն: Դրանք ընդամենը հիմնվում են սուբյեկտիվ գնահատականների վրա: Այսպիսի պայմաններում առկա է ԽՀՄ/ԽՀՀ գործունեության վերահսկողության, ինչպես նաև անդամներին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների անլիարժեքություն, ինչը գործնականում հանգեցնում է անպատասխանատու որոշումների կայացման և արհեստավարժության պակասի:

Խնդիր 3. ԽՀՄ/ԽՀՀ աշխատակազմի արհեստավարժության պակաս

ԽՀՄ/ԽՀՀ անդամները ճնշող մեծամասնությամբ չունեն համապատասխան մասնագիտական որակավորում, չունեն բավարար փորձ, չեն անցնում համապատասխան պարբերական վերապատրաստումներ ինչպես իրավական, այնպես էլ սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտներում: Նշվածը, մասնավորապես, խնդրահարույց է այն առումով, որ ԽՀՄ/ԽՀՀ գործունեությունը սերտորեն կապված է երեխաների սոցիալ-հոգեբանական և առողջական բարօրության հետ: Սա իր հերթին ենթադրում է հոգեբանական գիտելիքներ և հաղորդակցական հմտությունների բարձր մակարդակ

ունեցող մասնագետների առկայություն: Միևնույն ժամանակ, հանձնաժողովների անդամների մեծամասնությունը, հատկապես մարզերում լիարժեք իրազեկված չէ երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմներին:

Խնդիր 4. ԽՀՄ/ԽՀՀ գործունեության մեթոդաբանության բացակայություն

Ինչպես նշվել է Մարդու իրավունքների պաշտպանի 2013-2016 թվականների տարեկան զեկույցներում, ԽՀՄ/ԽՀՀ գործունեությունը չունի գործառույթների իրականացման մեթոդաբանություն, չկան մշակված ընթացակարգեր: Բացակայում են աշխատանքի պլանավորման և հետազոտական աշխատանքների իրականացման անհրաժեշտ գործիքներ, երեխաների ուղղորդման ընթացակարգեր և այլն: Արդյունքում՝ տուժում է ինչպես գործառույթների իրականացումը, իրավիճակներին արձագանքելու օպերատիվությունը, դեպքերի վարման ճշտապահությունը և օբյեկտիվությունը, այնպես էլ որոշումների ստուգման վիճակը և կարճաժամկետ ու երկարաժամկետ գնահատումը:

Ելնելով վերոնշյալ խնդիրների հրատապ լուծման պահանջից՝ անհրաժեշտ է.

1. աշխատանքներ տանել ԽՀՀ-ի անդամների մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ,
2. հնարավորության սահմաններում բացառել ԽՀՀ-ի անդամների աշխատանքի կամավորության սկզբունքը և մասնագետներ ներգրավել վճարովի հիմունքներով (սոցիալական աշխատող, հոգեբան),
3. ԽՀՀ-ի համար մշակել մեթոդական ուղեցույց, ինչպես նաև համապատասխան միջոցներ տրամադրել իրենց գործառույթների լիարժեք իրականացման համար,
4. վերանայել ԽՀՀ-ի լիազորություններն ու պարտականությունները՝ հաշվի առնելով ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման, ինչպես նաև համայնքների խոշորացման գործընթացը:

1.3 ԽՀՄ/ԽՀՀ վերաբերյալ տեղական և միջազգային կազմակերպությունների գնահատականը

Տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից ԽՀՄ/ԽՀՀ վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություններ չեն կատարվել: Այդուհանդերձ, առկա են զեկույցներ կամ հաշվետվություններ, որոնցում առկա է անդրադարձ վերհանված խնդիրներին (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF), Սեյվ դը չիլդրենի (Save The Children), Չայլդ պակտի (Child Pact), ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի (UNHRC) և այլ կազմակերպությունների զեկույցներում):

Այսպես, «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի այլընտրանքային զեկույցում, որը պատրաստվել է տեղական և միջազգային 45 կազմակերպությունների կողմից, ԽՀՄ գործունեության հիմնական խնդիրներից է նշված այն, որ երեխաների իրավունքների պաշտպանությունը նրանց համար առաջնահերթություն չէ և նրանք հիմնականում տեղեկացված չեն երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կատարվող բարեփոխումներին: Ըստ այդ զեկույցի՝ ԽՀՀ անդամները աշխատում են կամավորության սկզբունքով, չունեն աշխատելու որևէ խթան, նրանց գործողությունները արդյունավետ չեն, իսկ հաճախ ԽՀՀ կազմում ընդգրկվում են ոչ այնքան փորձառու աշխատողներ: ԽՀՀ-ները չունեն աշխատանքային պլաններ, չեն ձևակերպում իրենց հիմնական խնդիրները և նպատակները¹¹:

Մեկ այլ այլընտրանքային զեկույցում, որը պատրաստվել է «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից, անդրադարձ կա մի շարք ոլորտների, որտեղ երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ԽՀՀ կողմից: Ըստ զեկույցի՝ երեխաներին կամ ընտանիքներին վերաբերող որոշումները կայացվում են ընդամենը նրանց մեկ անգամ տեսնելով, առանց խորքային ուսումնասիրության և հետագա վերահսկողության: Մասնագիտական գիտելիքների և փորձի պակասի պատճառով հանձնաժողովը սխալ եզրահանգումներ է անում կոնֆլիկտային ընտանիքների կամ բռնության ենթարկված երեխաների վերաբերյալ: Մեկ այլ կարևոր խնդիր կապված է

¹¹ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/01/qax2-5_1.pdf

երեխաներին հաստատություն տեղավորելու ԽՀՀ իրավունքի և «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» կարգավիճակի տրամադրման հետ: Շատ դեպքերում ԽՀՀ-ները չեն դիմում դատարան՝ ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու համար, ինչի պատճառով հաստատություններում հայտնված երեխաները չեն որդեգրվում¹²:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության «Երեխաների իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան» վերտառությամբ զեկույցը նույնպես անդրադարձել է ԽՀՀ գործունեության կամավորության սկզբունքին: Ըստ այդ զեկույց՝ կամավորության սկզբունքով աշխատող ԽՀՀ-ները որոշումների մեծ մասը «. . . կայացնում են առանց կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի կամ նրա ընտանիքի հիմնախնդիրների խորքային ուսումնասիրության և հետագա հետևողական աշխատանքի»: Զեկույցում նաև անդրադարձ կա ռեսուրսների բացակայության փաստին: Մասնավորապես, նշվում է, որ ունենալով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ինքնուրույն հայտնաբերելու, նրանց մասին հոգ տանելու, նրանց հաշվառումը վարելու կանոնադրական խնդիր՝ վերջիններս չունեն դրանց պատշաճ իրականացումն ապահովելու ռեսուրսներ: ԽՀՀ-ները գրեթե չեն իրականացում իրենց վերապահված նաև այլ այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են երեխաների խնամքի կազմակերպման, ինչպես նաև տեսակցությունների սահմանման վերաբերյալ իրարից անջատ ապրող ծնողների միջև վեճերը, գույքային խնդիրները, խնամակալի թեկնածությունը և այլ հարցեր դատական կարգով լուծելու գործառույթները¹³:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի «Երեխաների իրավիճակի վերլուծությունը Հայաստանում» 2012թ. զեկույցում նույնպես ընդգծվում է այն փաստը, որ ԽՀՀ-ները գործում են հասարակական հիմունքներով և չունեն անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ՝ լիարժեքորեն գործելու և հաշվետու լինելու համար:

Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և պոռնոգրաֆիայի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկույցողը նույնպես առանձնացրել է ԽՀՀ հետ կապված խնդիրները: Հատուկ զեկույցողը մտահոգություն է հայտնել, որ ԽՀՀ կազմում ընդգրկված

¹² http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/CRC_Armenia_Final.compressed.pdf

¹³ <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>

չեն սոցիալական պրոֆեսիոնալ աշխատողներ, ինչը նշանակում է, որ ԽՀՀ-ները չեն կարող խոցելի ընտանիքներին պատշաճ օգնություն և խորհրդատվություն տրամադրել, գնահատել որդեգրող ընտանիքներին և համոզվել, որ որդեգրումը բխում է երեխայի լավագույն շահերից: Ըստ Հատուկ զեկուցողի՝ ԽՀՀ-ները կարևոր դեր ունեն երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում, սակայն համարվում են երեխաների պաշտպանության համակարգի ամենաթույլ օղակը¹⁴:

Առկա են նաև այլ զեկույցներ¹⁵, որոնցում հիմնականում բարձրացվում են վերը քննարկված խնդիրները:

1.4 Հասարակական կազմակերպությունների և ԽՀՄ/ԽՀՀ աշխատակիցների նկատառումները ԽՀՄ/ԽՀՀ վերաբերյալ

Սույն զեկույցում տեղ գտած գնահատականների հիմնավորվածությունն ու ամբողջականությունն ապահովելու նպատակով իրականացվել են նաև երեխաների պաշտպանության ոլորտի հասարակական կազմակերպությունների, ինչպես և ԽՀՄ/ԽՀՀ ներկայացուցիչների հետ ֆոկուս-խմբեր և խորքային հարցազրույցներ, որոնց ընթացքում հնարավոր եղավ վեր հանել ԽՀՄ/ԽՀՀ գործունեության հիմնախնդիրներ և բացեր:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և ԽՀՀ անդամների հետ գործնական բնույթի հանդիպումներն ու քննարկումները հնարավորություն են տվել վեր հանել խնդիրներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

- Իրավական խնդիրներ: ԽՀՀ-ը, լինելով ԽՀՄ-ին կից կառույց, ընդամենը խորհրդակցական մարմին է, որը գործում է հասարակական հիմունքներով և, ըստ էության, չունի ինքնուրույն գործունեություն իրականացնելու լիազորություն, իսկ ԽՀՄ-ները գործնականում հաճախ չեն պատվիրակում կամ լիազորում ԽՀՀ-ներին իրականացնելու հայտնաբերած դեպքերի ուսումնասիրություն: Բացի այդ, ԽՀՄ/ԽՀՀ-ները չունեն մշակված աշխատանքային կանոնակարգեր, դեպքերի

¹⁴ <http://www.refworld.org/pdfid/56dfe0134.pdf>

¹⁵ Օրինակ, http://www.childpact.org/wp-content/uploads/2016/03/EU-Armenia-HR-Dialogue2016_ChildPact-written-contribution.pdf:

հայտնաբերման համակարգ: ԽՀՄ/ԽՀՀ մեթոդաբանական ուղեցույցը դեպքերի վարման համար արդյունավետ չէ:

- Անձնակազմին առնչվող խնդիրներ: Բացակայում են ԽՀՀ անդամների ընտրության սկզբունքներ և ընթացակարգեր, անդամներից շատերը կոմպետենտ չեն տվյալ ոլորտում գործունեություն ծավալելու, մինչև անգամ՝ պահանջվող եզրակացություններ կազմելու հարցում: Բացի այդ, հանձնաժողովների անդամները ճնշող մեծամասնությամբ մոտիվացված չեն, գործունեության տվյալ տեսակին վերաբերում են որպես երկրորդականի:
- Տեխնիկական/նյութական խնդիրներ: Առկա են աշխատանքի պատշաճ կազմակերպումը խոչընդոտող լուրջ տեխնիկական խնդիրներ: Մասնավորապես, ԽՀՀ-ները չունեն իրենց գործառույթների իրականացման համար առանձնացված տարածք կամ սենյակ, տեխնիկական զինվածություն, փաստաթղթավարության և արխիվացման համար անհրաժեշտ հնարավորություններ: Դրանից բացի առկա չեն օպերատիվ արձագանքելու որևէ հնարավորություն (փոխադրամիջոցներ, այլ աշխատանքից ազատ անդամներ), իսկ մարզային համայնքներում առկա են գյուղից գյուղ տեղաշարժվելու բարդություններ և այլն:

Վեր է հանվել նաև երեխայի հետ աշխատանք տանող սոցիալական և հոգեբանական ծառայությունների բացակայության խնդիրը, ինչպես նաև շեշտվել ԽՀՀ-ների կազմում առնվազն մեկ արհեստավարժ սոցիալական աշխատողի ներգրավման անհրաժեշտությունը, ընդ որում՝ վճարովի հիմունքով: Առանձնահատուկ ընդգծվել է խոցելիություն ունեցող մեկից ավել ընտանիքների (օրինակ, փախստական ընտանիքների) երեխաների իրավունքների պաշտպանության մտահոգիչ վիճակը, ինչը թեև պահանջում է հատուկ ուշադրություն:

Առկա են նաև որոշակի անտրամաբանական ընթացակարգերի վերաբերյալ դիտարկումներ, որոնց շտկումը նույնպես առաջնահերթ է: Օրինակ՝ երեխայի փորձաքննության միայն ծնողի համաձայնությամբ հնարավոր լինելը, ինչը ծնողական բռնության դեպքերում ուղղակի խոչընդոտ է երեխայի իրավունքների պաշտպանության համար:

Քննարկումների ընթացքում հնչեցրել են նաև որոշակի առաջարկներ: Մասնավորապես, առաջարկվել է հանել ԽՀՄ-ների կանոնադրությամբ սահմանված երեխայի տարիքային շեմը՝ կապված նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց քննարկելիս երեխայի կարծիքը լսելու և հաշվի առնելու հետ: Նաև առաջարկվել է մշակել համապատասխան ընթացակարգ և համագործակցության մեխանիզմ՝ օգտագործելու ոլորտում ակտիվ գործող և հարուստ փորձ կուտակած հասարակական կազմակերպությունների ռեսուրսները, ինչի պատրաստակամություն հայտնել են քննարկումներին ներկա կազմակերպությունների ներկայացուցիչները:

**ԳԼՈՒԽ 2. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես արդեն նշվել է սույն գեկույցի նախորդ շարադրանքում, ԽՀՄ-ների գործունեությունը հիմնականում կարգավորվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքով, ԽՀՄ-ների կանոնադրությամբ, ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով սահմանված ԽՀՄ-ներին կից գործող ԽՀՀ-ների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցով:

ԽՀՄ/ԽՀՀ-ների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև պրակտիկայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել վերլուծության ենթակա հետևյալ հիմնական հարցերը.

- 1. Երեխայի լավագույն շահը և նրա կարծիքը հաշվի առնելը,*
- 2. ԽՀՄ/ԽՀՀ աշխատողների մասնագիտական պատրաստվածությունը և մոտիվացվածությունը,*
- 3. ԽՀՄ/ԽՀՀ գործունեության ոլորտի իրավական բացթողումները:*

2.1 Երեխայի լավագույն շահը և նրա կարծիքը հաշվի առնելու հիմնախնդիրը

1. ԽՀՄ/ԽՀՀ կանոնադրությամբ, որպես գործունեության սկզբունք, «**երեխայի լավագույն շահ**» եզրույթն ամրագրված չէ: Կանոնադրությամբ ընդհանրապես սահմանված չեն վերջիններիս գործունեության սկզբունքները: Անհրաժեշտ է նշել, որ Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ նրանից՝ դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ իրավաստեղծ

մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն, անդրադառնալով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով սահմանված «Երեխայի լավագույն շահ» եզրույթին, ամրագրել է, որ անդամ պետությունների համար սահմանվում են պարտավորություններ, մասնավորապես, երաշխավորելու, որ

- 1) երեխայի լավագույն շահը պատշաճ ինտեգրված է և հետևողականորեն կիրառվում է պետական մարմինների յուրաքանչյուր գործողությունում, մասնավորապես՝ վարչական և դատական վարույթներում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են երեխաների վրա.
- 2) երեխաներին վերաբերող բոլոր դատական և վարչական որոշումներում, ինչպես նաև քաղաքականությունում և օրենսդրական ակտերում ի ցույց է դրվում, որ երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն է դարձվել: Այն ենթադրում է նկարագրել, թե ինչպես են ուսումնասիրվել և գնահատվել լավագույն շահերը և թե ինչ նշանակություն է դա ունեցել որոշում կայացնելիս.
- 3) երեխայի շահերը գնահատվել և առաջնահերթ հաշվի են առնվել մասնավոր հատվածի, ներառյալ՝ ծառայություններ մատուցողների կամ երեխային վերաբերող կամ նրա վրա ազդող որոշումներ կայացնող ցանկացած այլ մասնավոր կառույցի կամ հաստատության որոշումներում և գործողություններում:

«Երեխայի լավագույն շահ» հասկացությանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Վերջինս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից:

Ուստի անհրաժեշտ է ամրագրել ԽՀՄ-ների համար երեխայի լավագույն շահի պաշտպանությունը և երեխայի վերաբերյալ որոշում կայացնելիս նրա լավագույն

շահը հաշվի առնելն: Դա կարևոր է նախևառաջ երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանություն ապահովելու տեսանկյունից:

2. Նշվածից բացի, ԽՀՄ կանոնադրությամբ սահմանված չեն նաև **երեխայի կարծիքը հաշվի առնելու և լաված լինելու նրա իրավունքի** իրացումն ապահովելու սկզբունքները: Համաձայն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի՝ իր սեփական հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Ընդ որում, երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն: Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ լաված լինել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով, ազգային օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով:

Սույն սկզբունքը, բացի սեփական կամքը ազատ արտահայտելու երեխայի իրավունքին ծառայելուց, արտացոլում է նաև երեխայի գլխավոր հոգեկան պահանջմունքները որպես գերակայություն ամրագրող մոտեցումը, ինչը բացարձակ կարևոր պայման է երեխայի լավագույն շահով առաջնորդվելու համար:

Ուշագրավ է այն, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով մեր երկրում առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվել է, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան, և որ երեխան ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, որն իր տարիքին և հասունության մակարդակին համապատասխան հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում¹⁶: Խնդրին 2016 թվականի դեկտեմբերի 20-ի ՍԴՈ-1333 որոշմամբ անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը:

¹⁶ <http://www.president.am/hy/constitution-2015/>

Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը չի նախատեսում տարիքային կամ այլ որևէ սահմանափակում: «Հաշվի առնողի» համար է պարտականություն սահմանված՝ ելնել երեխայի տարիքից և հասունության աստիճանից: Բացի դրանից, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը հանրային իշխանության վրա դնում է հստակ պարտականություն՝ առաջնահերթ ուշադրության արժանացնել երեխայի շահերին՝ նրան վերաբերող հարցերում: Հետևաբար, սահմանադրի նպատակն է երեխային վերաբերող հարցերում տարբեր շահերի առկայության դեպքում առաջնահերթ պաշտպանել երեխայի շահերը, այնուհետև՝ առկա մյուս շահերը, իսկ շահերի հակասության դեպքում հանրային իշխանությունը պարտավոր է պաշտպանել երեխայի շահերը:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լավելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումներով, և որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել երեխայի լավելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել¹⁷:

Ուստի, անհրաժեշտ է կանոնադրությամբ ամրագրել ԽՀՄ-ների և ԽՀՀ-ների գործունեության նշված սկզբունքները, մասնավորապես՝ իրեն վերաբերող հարցերում երեխայի մասնակցության և լաված լինելու սկզբունքը:

3. Վերը շարադրվածից բացի, Կանոնադրության 9-րդ կետի 6-րդ ենթակետը սահմանում է, որ ԽՀՄ-ները օրենքով սահմանված դեպքերում հաշվի են առնում 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց քննարկելիս և որոշում կայացնելիս, երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրության են արժանացնում իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համոզմունքներին ու կարծիքին՝ նրա տարիքին և հասունությանը

¹⁷ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1333.pdf>

համապատասխան: Նմանօրինակ տարիքային շեմի սահմանումներ հանդիպում են նաև մի շարք այլ երկրներում (Էստոնիա՝ 10 տարեկան¹⁸, Ֆինլանդիա՝ 12 տարեկան¹⁹): Սակայն նույն այդ երկրների օրենսդրություններում հստակ սահմանվում է նաև տարիքային շեմը չլրացած երեխաների կարծիքը հաշվի առնելու պահանջ: Այսպես, Էստոնիայի Ընտանեկան օրենսգրքի 151-րդ հոդվածում նշվում է, որ 10 տարին չլրացած երեխայի ցանկությունները պետք է հաշվի առնվեն, եթե նրա հասունության մակարդակը դա թույլ է տալիս: Ֆինլանդիայի օրենսդրության համաձայն մինչև 12 տարեկան երեխայի կամքին հակառակ որոշումներ չեն կայացվում (օրինակ՝ որդեգրումը): Մեր երկրում սա հիմնավորված է նրանով, որ ԽՀՄ/ԽՀՀ գործառույթները բավականին լայն են, ներառում են երեխայի կյանքի բազմաբնույթ իրավիճակներ: Գործնականում հնարավոր են դեպքեր, երբ սահմանված տարիքային շեմից ցածր տարիքի երեխայի վերաբերմունքն ու կարծիքը լսելը և հաշվի առնելը նրա լավագույն շահի տեսանկյունից նույնպես առաջնահերթ է :

Բացի այդ, անկախ երեխայի տարիքից, իրավիճակը հասկանալու տեսանկյունից օբյեկտիվ որոշումներ կայացնելու համար կարևոր է երեխայի հոգեբանական, հուզական, իմացական և այլ ոլորտների ուսումնասիրությունը և դրա արդյունքները հաշվի առնելը: Ակնհայտ է, որ որքան տարիքով ավելի փոքր է երեխան, այնքան նրա վերաբերմունքը հասկանալը ավելի բարդ և մասնագիտական հմտություններ պահանջող գործընթաց է: Դա իր հերթին ենթադրում է ԽՀՀ-ի կազմում արհեստավարժ նեղ մասնագետների ներգրավում (օրինակ՝ հոգեբան, սոցիալական աշխատող, մանկավարժ) :

Ուստի, անհարժեշտ է Կանոնադրության 9-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տարիքային շեմը հանել և նույն ենթակետում կատարել լրացում՝ կապված տարիքային շեմից ցածր տարիքի երեխայի կարծիքը լսելու և հաշվի առնելու անհրաժեշտության հետ՝ նախապես նրա հետ արվող սոցիալ-հոգեբանական հետազոտության արդյունքների հիման վրա:

¹⁸ <https://www.riigiteataja.ee/en/eli/ee/Riigikogu/act/527122016004/consolide>

¹⁹ <http://www.finlex.fi/en/laki/kaannokset/1985/en19850153.pdf>

4. ԽՀՄ/ԽՀՀ գործառույթների իրականացման ընթացքում երեխայի լավագույն շահի պաշտպանության տեսանկյունից կարևոր է զարգացման կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, առողջական, հոգեբանական, հոգեբուժական խնդիրներ ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցը: Խոսքը վերաբերում է, օրինակ, հաշմանդամություն, այդ թվում՝ մտավոր հաշմանդամություն ունեցող, զարգացման բարդ խանգարումներ ունեցող (աուտիկ սպեկտր, դաունի համախտանիշ և այլն) երեխաների խնամակալության հիմնախնդիրներին: Նման խնդիրներով երեխաների լավագույն շահը և իրավունքները պաշտպանելու համար ԽՀՄ/ԽՀՀ մասնագիտական հնարավորությունները չեն կարող բավարարել: Սա նշանակում է, որ առկա է արտաքին փորձագետ ներգրավելու կարիք, ում առջև կդրվեն կոնկրետ դեպքով որոշում կայացնելուն նպաստող և երեխայի առողջական վիճակի հետ կապված հարցադրումներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԽՀՀ-ի աշխատանքին արտաքին փորձագետի (նեղ մասնագետի) ներգրավելու ընթացակարգը կարգավորող դրույթներ Կանոնադրությունում առկա չեն: Գործնականում նման դեպքերում փորձ է արվում օգտագործել անձնական կապերը, ինչը հասկանալի պատճառներով չի կարող համարվել խնդրի լուծման լավագույն տարբերակ:

Արտաքին փորձագետի ներգրավումը կարող է լինել հիմնավորված ոչ միայն հատուկ կարիքներ ունեցող երեխաների պարագայում, այլ նաև բարդ հոգեբանական, վիճահարույց դեպքերում օբյեկտիվ գնահատման համար:

Ուստի, առաջնահերթ է Կանոնադրությունում սահմանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների լավագույն շահի պաշտպանության համար արտաքին փորձագետի ներգրավման պարտադիր ընթացակարգ:

2.2 ԽՀՄ/ԽՀՀ աշխատողների մասնագիտական պատրաստվածությունը, մոտիվացվածությունը

1. Համաձայն ԽՀՄ կանոնադրության 2-րդ կետի՝ ԽՀՄ-ները համայնքների ղեկավարներն են, իսկ Երևանում՝ վարչական շրջանների ղեկավարները: Այսինքն՝ խնամակալության և հոգաբարձության բազմաբնույթ և լայնածավալ գործառույթների իրականացման համար ձևավորված չեն առանձին վարչական միավորներ: Այդ գործառույթների իրականացումը վերապահված է արդեն իսկ մեծ ծանրաբեռնվածություն ունեցող անձանց վրա, ովքեր ակնհայտ պատճառներով չեն կարող ապահովել դրանց պատշաճ և արհեստավարժ իրականացումը: Համաձայն նույն Կանոնադրության 11-րդ կետի՝ ԽՀՀ-ները գործում են հասարակական հիմունքներով, ինչը որևէ պարագայում նրանց աշխատանքի խթանիչ գործոն չի կարող լինել: Նույնն, օրինակ, վերաբերում է ՌԴ օրենսդրությանը, որտեղ ԽՀՄ դերում հանդես են գալիս տեղական ինքնակառավարման մարմինները: Դրանց գործունեությունը, սակայն, այս ոլորտում ապահովվում է անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների փոխանցմամբ²⁰: Ղազախստանում ԽՀՄ-ի դերում են տեղական գործադիր մարմինները, սակայն դրանց գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթերում բացակայում են ֆինանսավորման վերաբերյալ դրույթներ²¹: Նույնը վերաբերում է նաև Ուկրաինային²²: Համաձայն Մեծ Բրիտանիայի Երեխաների մասին օրենքի 67-րդ հոդվածի՝ խնամակալության տարբեր ձևերի ներքո գտնվող երեխաների բարօրության ապահովման և վերահսկման համար պատասխանատվությունը նույնպես դրված է տեղական իշխանության մարմինների վրա: Սակայն դրանց գործառույթները իրականացվում են պարտադիրության սկզբունքով և ոչ հասարակական հիմունքներով²³:

Այլ է պատկերը Վրաստանում, որտեղ խնամակալության և հոգաբարձության գործառույթները համակարգում է Առողջապահության, աշխատանքի և սոցիալական գործերի նախարարության հատուկ ծառայությունը՝ Խնամակալության և

²⁰ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_76459/32ae6105adc58a3d61ed4c5798516f64779e8de7/

²¹ https://tengrinews.kz/zakon/pravitelstvo_respubliki_kazakhstan_premier_ministr_rk/bpak_i_semya/id-P990001346/#z10

²² <http://pravo-ukraine.org.ua/resyrsi/kz/gk/2468-statya-56-organ-opeki-i-popechitelstva>

²³ <http://www.legislation.gov.uk/ukpga/1989/41/contents>

հոգաբարձության ստորաբաժանումը (Guardianship and Curatorship Agency) և դրա տարածքային գործակալությունները²⁴: Ֆինլանդիայում նույնպես խնամակալության և հոգաբարձության գործառույթներն իրականացնում են առանձին կառույցներ: Դրանք որդեգրման գործակալություններ և մունիցիպալ բարեկեցության մարմիններն են (Municipal Welfare Bodies), որոնց գործունեությունը արտոնագրվում է Առողջապահության նախարարության կողմից²⁵:

Լատվիայում երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար պատասխանատու խնամակալության և հոգաբարձության մարմինը Ծնողագուրկների և խնամակալության դատարանն է, որը ստեղծված է մունիցիպալիտետի կողմից: Այս ինստիտուտի գործունեությունը կարգավորվում է նույն դատարանի մասին օրենքով: Մունիցիպալիտետը ֆինանսական միջոցներ է հատկացնում Ծնողագուրկների և խնամակալության դատարանի գործունեության համար: Նախագահի և անդամների վարձատրության կարգը սահմանվում է Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների և աշխատակիցների վարձատրության մասին օրենքով²⁶:

Խորվաթիայում հոգաբարձությունն իրականացվում է սոցիալական ապահովության կենտրոնի և խնամակալության մարմնի կողմից Ընտանեկան ակտի դրույթներին համապատասխան: Սոցիալական ապահովության օրենքի համաձայն՝ Խորվաթիայի Սոցիալական ապահովության կենտրոնը հանրային հաստատությունն է, որը հիմնադրվել է Խորվաթիայի Սոցիալական ապահովության նախարարության կողմից և կարգավորում է կենտրոնի մանդատին, գործունեությանը, կառուցվածքին, ինչպես նաև բյուջետավորմանն առնչվող հարցերը (ֆինանսավորվում է Խորվաթիայի պետական բյուջեից)²⁷:

Խորվաթիայի նոր Ընտանեկան ակտով ներկայացվել է դատարանում երեխայի շահերը ներկայացնող խնամակալության կենտրոնը (հոդվածներ 544-550): Այն

²⁴ <http://www.hopscotchadoptions.org/pages/pdfs/Fostering%20and%20adoption%20law%20ENG1.pdf>

²⁵ <http://www.finlex.fi/en/laki/kaannokset/1985/en19850153.pdf>

²⁶ Տեղեկությունը ստացվել է Լատվիայի օմբուդսմանի գրասենյակից:

²⁷ Տեղեկությունը ստացվել է Խորվաթիայի օմբուդսմանի գրասենյակից:

պետական հաստատություն է և ստեղծվել է Սոցիալական ապահովության նախարարության որոշմամբ: Այդ մարմնի իրավասությունը տարածվում է երկրի ողջ տարածքի համար, նստավայրը գտնվում է Ջազրեբում և ունի երեք տարածքային ստորաբաժանում: Դրանք գտնվում են Խորվաթիայի հիմնական երեք քաղաքներում (Օսիյեկ, Սպլիտ, Ռիյեկա): Կենտրոնը նույնպես ֆինանսավորվում է Խորվաթիայի պետական բյուջեից և համաձայն Ընտանեկան ակտի՝ ունի երեխաների շահերը դատարաններում և այլ մարմիններում ներկայացնելու իրավասություն: Միայն համապատասխան իրավական փորձ ունեցող և պատրաստված անձը, ով այս հաստատության աշխատակից է, կարող է նշանակվել երեխայի շահերը դատարանում ներկայացնող խնամակալ:

Լեհաստանում համայնքային մակարդակում երեխայի իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվում են Ընտանիքի աջակցության կենտրոնները, որոնք ենթարկվում են տեղական ինքնակառավարման մարմիններին և ունեն առանձին բյուջե²⁸:

Այսպիսով, առաջնահերթ է ԽՀՄ/ԽՀՀ կառուցվածքային վերափոխումը: Մասնավորապես, անհրաժեշտ է ստեղծել առանձին վարչական միավորներ (գլխամասային և տարածքային), որոնք կունենան պետական ֆինանսավորում և յուրաքանչյուր տարվա համար կազմվող բյուջե: Սա հնարավորություն կտա ոլորտ ներգրավվելու արհեստավարժ, այլ գործունեությամբ չծանրաբեռնված և մոտիվացված մասնագետների, ինչը վերահսկողության և պատասխանատվության կիրառումը կդարձնի ավելի հեշտ: Բացի այդ, սույն առաջարկը կարևոր է այն տեսանկյունից, որ կնվազի վերապատրաստված կադրերի հոսունությունը՝ ներառյալ պայմանավորված համայնքի ղեկավարի փոփոխությամբ, ինչպես նաև այդ կերպ չեն վատնվի վերապատրաստման համար հատկացվող ռեսուրսները:

²⁸ Տեղեկությունը ստացվել է Լեհաստանի օմբուդսմանի գրասենյակից:

2. Համաձայն ԽՀՄ կանոնադրության 7-րդ կետի՝ ԽՀՄ-ներն իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն Կանոնադրությունում ոչինչ չի խոսվում հանձնաժողովի անդամների կողմից՝ իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության մասին: Սա մտահոգության առարկա է:

Ինդիրն այն է, որ համաձայն Կանոնադրության 14-րդ կետի՝ հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ): Նրանց աշխատանքային գործունեությունը, ըստ Կանոնադրության 11-րդ կետի, կրում է հասարակական բնույթ, ինչը հանձնաժողովի անդամի աշխատանքային ցածր մոտիվացիայի լրացուցիչ գործոն է:

Ուստի, հանձնաժողովի անդամների գործունեության հասարակական բնույթից բացի, հաճախ նրանց պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների բացակայությունը երեխայի կյանքի վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ անփութության, անգործության կամ մասնագիտական սխալներ թույլ տալու պատճառ է:

Այլ երկրների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում ԽՀՄ-ների և հանձնաժողովների անդամների գործունեության վերահսկողությունը և պատասխանատվության մեխանիզմները տարբեր են: Դրա հետ միասին, գրեթե բոլոր դեպքերում այդ մարմինները հաշվետու են կա՛մ համապատասխան նախարարությանը, կա՛մ ոլորտը վերահսկող և այդ նախարարությանը ենթակա

հատուկ խորհուրդներին (օրինակ՝ Ֆինլանդիայում՝ Որդեգրման խորհրդին²⁹): Առանձին անդամների պատասխանատվությանն առնչվող հարցերն ամրագրված են նրանց աշխատանքային պարտականությունները սահմանող ակտերում:

Լատվիայում Երեխաների իրավունքների պաշտպանության պետական տեսչությունը (ենթակա է Լատվիայի բարեկեցության նախարարությանը) վերահսկում է Ծնողագուրկների և խնամակալության դատարանի գործունեությունը: Վերջինս տարեկան գոնե մեկ անգամ տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան խորհրդին ներկայացնում է իր գործունեության հաշվետվություն: Այդ խորհուրդն իր հերթին իրավասու է գործունեության հաշվետվություն պահանջել ցանկացած ժամանակ³⁰:

Հետևաբար, անհրաժեշտ է կանոնադրությամբ և դրան առնչվող այլ իրավական ակտերով նախատեսել հանձնաժողովի անդամների կողմից իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության մեխանիզմ: ԽՀՄ/ԽՀՀ աշխատակիցը պետք է իր ցանկացած որոշման և արարքի համար լիարժեք պատասխանատու լինի օրենքի և հասարակության առջև: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է ունենա սեփական կարծիքը գրավոր արտահայտելու հնարավորություն: Ընդ որում, դա պետք է կրի պարտադիր բնույթ: Օրենսդրական նորմերը պետք է այնպես կատարելագործվեն, որ ԽՀՄ/ԽՀՀ յուրաքանչյուր պաշտոնակատար անձ կրի իր գործունեության համար առավելագույն անձնական պատասխանատվություն: Միայն այդ դեպքում հնարավոր է լիարժեք պաշտպանել ԽՀՄ-ներ դիմած ծնողների և նրանց երեխաների իրավունքներն ու օրինական շահերը: Անհրաժեշտ է նաև մշակել ԽՀՄ/ԽՀՀ գործունեության արդյունավետության գնահատման չափանիշներ և համապատասխան ընթացակարգ:

²⁹ <http://www.finlex.fi/en/laki/kaannokset/1985/en19850153.pdf>

³⁰ Տեղեկությունը ստացվել է Լատվիայի օմբուդսմանի գրասենյակից:

3. ԽՀՄ/ԽՀՀ Կանոնադրությանը չի բովանդակում ԽՀՀ անդամների որակավորման կամ կրթական աստիճանը, ինչպես նաև անհրաժեշտ վերապատրաստումների նորմատիվները սահմանող դրույթներ: Միևնույն ժամանակ, Կանոնադրությամբ սահմանված են գործառույթներ, որոնց թվում են բարդ և երեխայի (կամ ծնողի) հոգեբանական, հուզական, տարիքային և վարքային առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկվածություն ենթադրող գործառույթներ: Այդպիսիք են, օրինակ, յուրահատուկ ծնողական սահմանափակված իրավունքով ծնողներին թույլատրելը երեխայի հետ շփվել՝ նախապես գնահատելով երեխայի վրա դրա բացասական ազդեցության ռիսկը, խնամատար ընտանիքում երեխայի ինտեգրվելուն աջակցելը, ծնողների միջև երեխայի անվան կամ այլ հարցերի վերաբերյալ անհամաձայնության հետևանքով առաջացած տարաձայնությունների լուծումը, երեխայի կյանքին կամ առողջության անմիջական վտանգ սպառնալու դեպքում երեխային ծնողներից կամ խնամող անձից վերցնելը և այլն: Նշված և շատ այլ գործառույթներ հանձնաժողովի անդամից պահանջում են հոգեբանական նեղ գիտելիքներ և հմտություններ, դեպքի վարման իմացություն, ինչպես նաև հաղորդակցական, մեդիացիայի և փոխվստահելի հարաբերություններ կառուցելու հստակ ունակություններ:

Վրաստանի փորձն, օրինակ, վկայում է, որ Խնամակալության և հոգաբարձության գործակալությունների (Guardianship and Curatorship Agency) կազմում արհեստավարժ սոցիալական աշխատողի պարտադիր առկայությունը հեշտացնում է բարդ իրավիճակներում գիտականորեն հիմնավորված որոշումներ կայացնելու գործընթացը: Եթե դրան ավելացնենք նաև թիմում մանկական հոգեբանի և հատուկ մանկավարժի ներգրավումը, ապա հանձնաժողովի գործառույթների պատշաճ իրականացումը զգալիորեն կհեշտանա, իսկ գործողությունների հետագա գնահատումը և մշտադիտարկումը կիրականացվի ոչ թե «աչքաչափով», այլ հիմնավորված գիտական գործիքներով:

ՌԴ Խնամակալության և հոգաբարձության մասին օրենքը սահմանում է իրենց պարտականությունների կատարման համար ԽՀՄ աշխատողների անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների նկատմամբ պահանջներ, ինչպես

նաև մոտավոր լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր և ժամաքանակ (72 ժամ)³¹:

Լատվիայի Ծնողագուրկների և խնամակալության դատարանի անդամները պետք է ունենան առաջին (քուեջ) կամ երկրորդ կարգի բարձրագույն ակադեմիական կրթություն մանկավարժության, հոգեբանության, բժշկության կամ իրավագիտության ոլորտներում: Նախագահները նշված ոլորտներում պետք է ունենան նվազագույնը երկրորդ մակարդակի բարձրագույն ակադեմիական կրթություն: Ի հավելումն՝ ընտրվելուց հետո վեց ամսվա ընթացքում դատարանի անդամներն ու նախագահը պետք է անցնեն վերապատրաստում Ծնողագուրկների և խնամակալության դատարանի, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության ուսումնասիրությանը նվիրված (նվազագույնը 150 ժամ տևողությամբ): Դատարանի անդամ կամ նախագահ չեն կարող ընտրվել այն անձինք, ովքեր զրկվել են երեխայի խնամակալությունից, դատապարտվել են դիտավորությամբ հանցանք կատարելու համար, խախտել են երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող օրենքներ կամ կարգավորումներ, գտնվում են հոգաբարձության ներքո կամ կախվածություն ունեն ավրոհողից, թմրանյութերից, հոգեմետ կամ տոքսիկական նյութերից³²:

Ելնելով նշվածից՝ անհրաժեշտ է կանոնադրությամբ և փոխկապակցված այլ իրավական ակտերով սահմանել ԽՀՄ/ԽՀՀ աշխատակցի կրթական որակավորման շեմը, մասնագիտական կրթության ոլորտները (սոցիալական, հոգեբանական, մանկավարժական և այլն), ինչպես նաև այլ հստակ չափանիշներ (օրինակ, դիտավորությամբ քրեական պատասխանատվության ենթարկված լինելու բացակայությունը, երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող օրենսդրության խախտումների բացակայությունը և այլն): Բացի այդ, անհրաժեշտ է մշակել խնամակալության և հոգաբարձության մասնագետի աշխատանքի նկարագիր (պաշտոնի անձնագիր), աշխատողին ներկայացվող

³¹ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_157177/#dst100010

³² Տեղեկությունը ստացվել է Լատվիայի օմբուդսմանի գրասենյակից:

մասնագիտական (պրոֆեսիոգրամա) և անձնային (հոգեգրամա) պահանջներ, անձի՝ դրանց համապատասխանելու աստիճանի գնահատման գործիքներ:

4. Կանոնադրության 12-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ, իսկ ըստ նույն Կանոնադրության 17-րդ կետի՝ Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

Ենթադրվում է՝ հանձնաժողովի անդամների քանակի նվազագույն շեմը սահմանելիս հաշվի են առնվել գյուղական համայնքներում մարդկային սուղ ռեսուրսները, սակայն գործնականում դա կարող է բերել խնդիրների: Տեսականորեն հնարավոր է, երբ նիստին ներկա են ընդամենը Հանձնաժողովի նախագահն ու անդամը և ունեն տարբեր կարծիքներ: Տվյալ պարագայում ստացվում է, որ Հանձնաժողովի նախագահը, փաստորեն, կայացնում է միանձնյա որոշում:

Նմանատիպ կարգավորում առկա է նաև Լատվիայում, որտեղ Ծնողազուրկների և խնամակալության դատարանը կազմված է նախագահից և նվազագույնը երեք անդամից, ովքեր ընտրվում են 5 տարով: Սակայն դատարանի անդամների թիվը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմնի վարչական տարածքում գրանցված բնակիչների թվով: Դատարանն իրավասու է նշանակելու այլ աշխատակիցների³³:

Ոչ պակաս կարևոր է ԽՀՀ-ի կազմի ձևավորման սկզբունքների մշակումը: Մասնավորապես, կարևոր է անդամների սեռային ողջամիտ բաշխվածությունը, քանի որ սեռային համակարծիքությունը նույնպես կանխակալ որոշումների կայացման նախապայման է: Դա փաստվում է ինչպես հայաստանյան հասարակական կազմակերպությունների, այնպես էլ խնամակալության և հոգաբարձության ոլորտի

³³ Տեղեկությունը ստացվել է Լատվիայի օմբուդսմանի գրասենյակից:

զարգացման նմանատիպ փուլում գտնվող այլ երկրների փորձով (օրինակ՝ Ուկրաինայում³⁴) :

ԽՀՀ կազմի ձևավորման մյուս կարևոր գործոնը անդամների տարիքն է, որի առավելագույն շեմ սահմանված չէ: Ինչպես ցույց է տալիս հայաստանյան փորձը, հանձնաժողովները մեծամասամբ համալրված են միջինից բարձր տարիքի անդամներով, ովքեր, որպես կանոն, առաջնորդվում են երեխաների հիմնախնդիրներին առնչվող կարծրացած մոտեցումներով և մտածողությամբ: Նրանց հաճախ խորթ են նաև երեխայի իրավունքների նկատմամբ ժամանակակից միջազգային սկզբունքները:

Նմանատիպ իրավիճակներից խուսափելու և հանձնաժողովի որոշման օբյեկտիվությունն ապահովելու համար հանձնաժողովը նվազագույնը պետք է ունենա 5 անդամ: Կանոնադրությունում անհրաժեշտ է ամրագրել դրույթներ, որոնց հիման վրա կձևավորվեն հանձնաժողովների օպտիմալ կազմեր: Պետք է հաստատվի սկզբունք, որը թույլ կտա հանձնաժողովի անդամներ նշանակել՝ էլնելով սեռերի հավասարության պահանջից: Նպատակահարմար է նաև սահմանել հանձնաժողովի կազմում ընդգրկվող անդամների աշխատանքային ստաժի նվազագույն շեմ, ինչպես նաև տարիքային առավելագույն սահման:

2.3 ԽՀՄ/ԽՀՀ գործունեության ընթացակարգային բացթողումները

1. ԽՀՄ գործունեությունն ուղղակիորեն առնչվում է կյանքի դժվար իրավիճակում հայտնված ընտանիքներին և ներազդում է երեխայի կյանքի որակի, կենսակերպի և առաջնային ու հիմնարար պահանջմունքների վրա: Դրանով իսկ այն սերտորեն կապվում է երեխայի ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական բարօրության հետ: Սա ենթադրում է, որ այս կառույցների գործունեությունը պետք է իրականացվի

³⁴ <http://blog.liga.net/user/dzenkin/article/21054.aspx>

միջազգային այն պահանջներին համապատասխան, որոնք սահմանում են երեխայի հետ առնչվող մասնագետների և կառույցների որոշակի վարքագծային (էթիկական) նորմեր ու կանոններ: Մինչդեռ, Կանոնադրությունում բացակայում է վարքագծային նորմերի մասին ակնարկ: ԽՀՄ/ԽՀՀ գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցում էթիկայի մատնանշումը առկա է ընդամենը մեկ կետում, որը կրում է հոչակագրային բնույթ: Մասնավորապես, Ուղեցույցի 23-րդ կետն ընդամենը սահմանում է, որ ընտանիք այցելությունները կատարվում են մասնագիտական էթիկայի կանոնների համաձայն: Նման իրավիճակը թույլ չի տալիս խնամակալության և դրան վերաբերող բարդ էթիկական երկընտրություններում առաջնորդվել հստակ սահմանված դրույթներով, ինչպես նաև վտանգավոր է ԽՀՀ անդամների կամայականությունների, վարքային և էթիկական խախտումների տեսանկյունից: Սա փաստվում է Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներով, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաստմամբ: Հանդիսանալով հասարակության դժվարին հոգեբանական և հուզական հիմնահարցերի հետ գործ ունեցող մարմին՝ ԽՀՄ/ԽՀՀ-ները պետք է մարմնավորեն բարձր էթիկական և բարոյական նորմեր կրող և դրանք օրենքով ամրագրած կանոնադրությամբ առաջնորդվող կառույցներ:

Ուստի, առաջնահերթ է ԽՀՄ-ների աշխատակիցների համար առանձին վարքագծի կանոնագրքի մշակումն ու ներդրումը՝ հաշվի առնելով ծնողների և երեխաների հետ նրանց աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները: Նախքան ԽՀՄ/ԽՀՀ աշխատանքում ներգրավվելը թեկնածուն պետք է գնահատվի մտավոր և հոգեկան որակների, ինչպես նաև բարոյական և էթիկական սկզբունքների նկատմամբ զգայունության տեսանկյունից:

2. Թեև Կանոնադրությունը սահմանում է, որ ԽՀՀ կազմում կարող են ընդգրկվել նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, սակայն պարզ չէ՝ դա ինչ կարգով և ինչ պայմաններում կարող է տեղի ունենալ: Սահմանված չեն նաև

հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացվող պահանջներն ու չափանիշները:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովման և նրանց գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է հանձնաժողովի կազմում հստակեցնել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկման կարգը:

3. Կանոնադրության 19-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանձնաժողովի նիստերին որպես դիտորդ կարող են ներկա գտնվել նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ այն անձի (անձանց) համաձայնության դեպքում, որին (որոնց) վերաբերում է տվյալ քննարկումը:

Նախ հասկանալի չէ, թե ինչ իրավական ակտով է սահմանվելու հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը և երկրորդ՝ ինչ է լինում այն դեպքերում, երբ անձանցից մեկը, ում վերաբերում է տվյալ քննարկումը, դեմ է նրանց մասնակցությանը:

Նշված դեպքում նույնպես անհրաժեշտ է հստակեցումներ կատարել: Մասնավորապես, պետք է ամրագրել, թե կոնկրետ ինչ իրավական ակտով է սահմանվելու հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը, ինչպես նաև սահմանել մասնակցության հստակ ընթացակարգային չափորոշիչներ:

4. Կանոնադրության 15-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի (հասցեն, սենյակը

կամ դահլիճը) մասին և համապատասխան տեղեկատվություն է փակցնում տեղական ինքնակառավարման մարմնի նստավայրի հայտարարությունների վահանակին:

Հանձնաժողովի նիստի թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև շահագրգիռ անձանց լիարժեք իրազեկելու տեսանկյունից պետք է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի և վայրի մասին տեղեկացնել նաև էլեկտրոնային տարբերակով՝ համապատասխան տեղեկությունը համայնքի կայքում տեղադրելով:

5. Ի տարբերություն 2011թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշման, որով սահմանվում էր, որ ԽՀՀ-ը գործում է իր կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան: Նոր կանոնադրությամբ ամրագրված է, որ Հանձնաժողովը կարող է ունենալ աշխատակարգ, որը հաստատվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

Անհրաժեշտ է սահմանել աշխատակարգ պարտադիր ունենալու պահանջ և միասնական պահանջներ:

6. Նշվածից բացի, Կանոնադրությամբ սահմանված չէ հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման, նիստերի անցկացման պարբերականության, նիստի արձանագրությունում պարտադիր նշման ենթակա տեղեկությունների, շահերի բախման դեպքերում հանձնաժողովի անդամին բացարկ ներկայացնելու կամ նրա կողմից ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու ընթացակարգը: Տարանջատված չեն նաև հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները:

Վերոգրյալի հիման վրա անհրաժեշտ է սահմանել հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված հստակ կարգավորումներ:

7. Համաձայն ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և հաստատվել է ԽՀՄ կից գործող ԽՀՀ գործունեության վերաբերյալ մեթոդական Ուղեցույց, որը կոչված է ծառայելու որպես ԽՀՄ/ԽՀՀ համար գործնական օգնություն: Սակայն, ուղեցույցի դրույթները ճնշող մեծամասնությամբ կրկնում են Կանոնադրությունը և կրում են հոչակագրային բնույթ: Դրանք չեն ներառում կոնկրետ ընթացակարգեր կամ գործիքներ: Մասնավորապես, ուղեցույցի 19-րդ կետով սահմանվում է, թե խնամակալի (հոգաբարձուի) նշանակման գործընթացում ինչ գործոններ պետք է հաշվի առնվեն՝ բարոյական և անձնական հատկանիշները, պարտականությունները կատարելու ունակությունները, երեխայի հետ փոխհարաբերությունները, երեխայի նկատմամբ վերաբերմունքը և այլն: Դրա հետ մեկտեղ, պարզ չէ՝ ինչ մեթոդական գործիքների և քայլերի հիման վրա պետք է իրականացվի այդ գործոնների գնահատումը: Նույն թերությունն առկա է Ուղեցույցի 23-րդ կետում: Վերջինս սահմանում է խնամակալների և հոգաբարձուների նկատմամբ ԽՀՄ հսկողության գործառույթը, որի շրջանակներում պետք է առնվազն տարեկան երկու անգամ իրականացվեն մանրակրկիտ ուսումնասիրություններ երեխայի առողջական վիճակի, նրա կենսապայմանների, ընտանիքի մյուս անդամների հետ հարաբերությունների, վարքի վերաբերյալ: Պարզ չէ, թե ինչ մեթոդաբանությամբ պետք է ԽՀՀ անդամն իրականացնի ռիսկերի գնահատում և վերահսկողություն: Ուղեցույցի 32-րդ կետը սահմանում է երեխայի հանդեպ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնության և անտեսման հայտնաբերման պարագայում երեխային ծնողներից կամ խնամակալներից վերցնելու և ժամանակավորապես տեղավորելու իրավասությունը: Նման որոշման կայացումը երբեք դյուրին չէ, քանի որ բռնության հայտնաբերումը (հատկապես՝ հոգեբանական և սեռական) բարդեցված է որոշակի գործոններով: Այդ գործոններից կարևորներն են մարմնական հետքերի բացակայությունը, երեխայի զոհացման երևույթը (երբ բռնությունն այդպիսին չի որակվում երեխայի և նույնիսկ՝ շրջապատի կողմից), զոհի մեղքի զգացման առկայությունը և այլն: Հետևաբար, օպերատիվ և օբյեկտիվ գնահատում

իրականացնելու համար ԽՀՀ անդամը, բացի հոգեբանական գիտելիքների և հմտությունների տիրապետումից, պետք է ունենա գիտականորեն հիմնավորված որոշակի գործիքների և քայլերի իմացություն: Դրանց առկայությունն Ուղեցույցում կամ կից հավելվածներում պարտադիր պայման է:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին առնչվող դեպքերի կապակցությամբ, Ուղեցույցում ընդհանրապես բացակայում են դրույթներ նման կարիքներով երեխաների հետ աշխատանք տանելու վերաբերյալ: Սա հակասում է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին և չի կարող ընդունելի լինել:

Լատվիայում այս խնդիրն ունի հետևյալ կարգավորումը³⁵. Բարեկեցության նախարարությունը և դրան ենթակա երեխաների իրավունքների պաշտպանության պետական տեսչությունը Ծնողագուրկների և խնամակալության դատարանին ապահովում են համապատասխան մեթոդոլոգիական օժանդակությամբ: Մեթոդոլոգիական ցուցումների թեմաները ներառում են իրավական կառույցի և որոշումների ընդունման գործընթացի, դատարանի գործունեության մեջ միջնորդության կիրառման, երեխաների անձնական և սեփականության շահերի և իրավունքների պաշտպանության և այլնի մասին նյութեր:

Վերջապես, ինչպես արդեն նշվել է սույն զեկույցի նախորդ շարադրանքում, Ուղեցույցը (ինչպես և Կանոնադրությունը) չի սահմանում ԽՀՄ/ԽՀՀ գործունեության էթիկական սկզբունքները՝ միջազգային և մարդասիրական գաղափարախոսությանը համապատասխան: Դա թույլ է տալիս վիճահարույց դեպքերում հակասական մեկնաբանություններ և որոշումներ կայացնել:

Հետևաբար, պարտադիր է ԽՀՀ գործունեության վերաբերյալ մեթոդական Ուղեցույցի ամբողջական վերամշակումը՝ այն իրապես ծառայեցնելու ԽՀՀ գործառույթների իրականացմանն ուղղված օգտակար գործիք լինելու համար: Այս նպատակով անհրաժեշտ է ուղեցույցի մշակման գործընթացին ներգրավել

³⁵ Տեղեկատվությունը ստացվել է Լատվիայի օմբուդսմանի գրասենյակից:

արհեստավարժ հոգերաններ, սոցիալական աշխատողներ, առողջապահության
ուլորտի մասնագետներ: